16.qxd 09/08/2025 13:58 Page 1

ԳԵՂԱՄԱ աշխարհ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 11 օգոստոսի 2025թ. թիվ 16 (620)

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԴԻՏԱՐԿԵՑ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ

Հուլիսի 23-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի հետ Երանոս, Վարդաձոր եւ Ջորագյուղ գյուղերում դիտարկեց սուբվենցիոն ծրագրերի ընթացքը:

Նրանց ուղեկցում էին Երանոս, Վարդաձոր, Ջորագյուղ գյուղերի վարչական ղեկավարները, Գեղարքունիքի մարզպետի եւ Մարտունու համայնքապետարանի աշխատակազմերի քաղաքաշինության ոլորտի պատասխանատուներ:

Այցի առաջին կանգառը Երանոսի 5-րդ, 9-րդ, 21-րդ, 22-րդ փողոցներում էր, որտեղ հիմնանորոգման ու ասֆալտապատման աշխատանքներն ավարտվել են ՀՀ կառավարության կողմից 2024 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

Շինարարական աշխատանքների մեկնարկը տրվել է 2025 թվականի մայիսից: 2025 թվականի հուլիսի 23-ի դրությամբ արդեն ամբողջությամբ ասֆալտապատված են բոլոր փողոցները՝1920 մետր երկարությամբ եւ 9240 քառակուսի մետր մակերեսով: Նույն ծրագրի շրջանակներում Երանոսի թիվ 21 եւ 22 փողոցներում կառուցվել է 75 գծամետր երկարության հենապատ:

Երանոսի փողոցների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 116 միլիոն 652 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Այցի երկրորդ կանգառը Երանոսի թիվ 1,2,3, 21,27-րդ փողոցներում ու Վարդաձորի խճուղում էր, որտեղ ՀՀ կառավարության կողմից 2024 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում արդեն ավարտվել են ոռոգման ջրատար ցանցի կառուցման աշխատանքները:

Երանոսի ոռոգման ջրատար ներքին ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 67 միլիոն 780 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրի իրականացման արդյունքում Երանոսում ոռոգման ջրատարի ներքին ցանց է կառուցվել՝ 1797 մետր ընդհանուր երկարությամբ, մետաղական, երկաթբետոնե եւ պոլիէթիլենային կիսախողովակներով կամ խողովակներով:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2024 թվականի օգոստոսին եւ ավարտվել 2025 թվականի հունիսին:

Ծրագրի իրականացման շնորհիվ այս ոռոգման շրջանից Երանոսի շուրջ 600 տնտեսության տնամերձ հողամասերում ոռոգման ջուրը մատակարարվում է ժամանակին եւ անկորուստ:

/շարունակությունը՝ էջ 2-ում/

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԵՐԿՈՒ ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻԿ ԱՐԾԱԹԵ ՄԵԴԱԼ ԵՆ ՆՎԱՃԵԼ ԵՎՐՈՊԱՅԻ ԿՐՏՍԵՐ ՏԱՐԻՔԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետության բռնցքամարտի կրտսեր տարիքի պատանիների հավաքականի կազմում Գեղարքունիքի մարզը ներկայացնող երկու բռնցքամարտիկ արծաթ մեդալով են հայրենիք վերադարձել Սերբիայում կայացած Եվրոպայի առաջնությունից:

Ինչպես տեղեկացրեց Գեղարքունիքի մարզի բռնցքամարտի ֆեդերացիային նախագահ Գեւորգ Սարգսյանը, միջազգային մրցաշարում պատվո երկրորդ աստիճանին կանգնել են Սեւանի մարզադպրոցի սան, 51 կիլոգրամ քաշային Կարինե Դալլաքյանը եւ Մարտունու մարզադպրոցի սան, 36 կիլոգրամ քաշային Էլեն Բարսեղյանը:

-Մինչ եզրափակիչ հասնելը մեր կրտսեր տարիքի բռնցքամարտիկները երկուական հրաշալի մենամարտեր անցկացրին՝ թողնելով հիանալի տպավորություն ու դրսեւորելով հաղթանակի հասնելու կամք ու ձգտում: Ամեն դեպքում, երկու արծաթե մեդալն էլ մենք համարում ենք լուրջ նվաճում ու լիահույս ենք, որ Կարինե Դալլաքյանն ու Էլեն Բարսեղյանը դեռ մեզ կշարունակեն հիացնել իրենց նորանոր հաղթանակներով,- նշեց Գեւորգ Սարգսյանը:

Մեր մեդալակիր մարզուհիներին շուքով են դիմավորել իրենց համայնքներում:

ԳԵՂԱՄԱ ԼԵՌՆԵՐԻ ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Գեղամա լեռնավահանի հսկայազանգված ու սքանչելի կատարներից մեկի՝ Սպիտակասարի գագաթի վերելքը սկսելուց առաջ ու Գռիձորի եւ Նազենի լճի համայնապատկերներով զմայլվելուց հետո «Աժդահակ Տուր»-ի ղեկավար Թաքուլ Տոնոյանի ուղեկցությամբ շարժվում ենք դեպի Գնդասար լեռան ստորոտ, դեպի Կոտայքի մարզի Զառ գյուղի վարչական տարածք՝ ժայռապատկերային արվեստի բազմազան ու բազմաթիվ գլուխգործոցները դիտելու:

Թաքուլի ամենագնացը հաղթահարում է Գեղամա լեռների սարավանդներն ու բարձրությունները, դաշտամիջյան խորդուբորդ ճանապարհները: Ամառային արոտավայրերում մենք տեսնում ենք ոչխարների հոտեր ու տավարի նախիրներ, անասնապահների վրանային կեցավայրեր ու անասնափարախներ, հոտերն ու նախիրները արոտի հանած անասնապահներին, հոտերը հսկող հպարտ ու ամեհի գամփռ շներին, լայնարձակ դաշտերով մեկ արածող կամ վարգող ձիերին՝ հիանալով հովվերգական կյանքի աննման, հոգեպարար տեսարաններով:

Այս կենդանի, հուզառատ պատկերները մեզ ակամա հետ են տանում դեպի դարերի ու հազարամյակների խորքերը, երբ մարդն առավել ուժեղ էր ձուլված բնությանը, երբ նոր-նոր էր հիմք դնում անասնապահության ու հողագործության մեծ մշակույթներին՝ մաքառելով բնական անսանձ տարերքների, կյանքի ամեն մի դժվարությունների դեմ: Ու նույն հովվերգական կյանքը, քաղաքակրթությունից իսպառ կտրված կենցաղը շարունակվում է նաեւ մեր օրերում, աշխարհից հեռու այս ամայի, կուսական լեռների գրկում: Եվ երջանիկ ենք զգում մեզ այն մտքից, որ տեսածներս ոչ թե գեղարվեստական կինոնկար է, այլ՝ կենդանի, շնչող իրականություն, աննկարագրելի, հաճելի եռուզեռ: Մենք սրտաբաց ողջունում ենք սարվորներին ու շարունակում մեր ուխտագնացությունը դեպի Պայտասարի ստորոտ, որտեղ, ինչպես Թաքուլն է նկարագրում, ժայռապատկերների անվերջանալի գրադարան է՝ հսկայածավալ քարափների տեսքով:

-Վախենամ, թե այդ ժայռապատկերները մեկառմեկ տեսնելու համար մեզ մի ցերեկը չբավարարի, Սպիտակասար բարձրանալու համար բավարար ժամանակ չունենանք,- ասում է Թաքուլը:

Վերջապես մեր մեքենան կանգ է առնում Պայտասարի ստորոտի քարափի մոտ, ու մենք մեզ արդեն զգում ենք բոլորովին այլ իրականության մեջ, հեքիաթային մի ուրիշ աշխարհում:

/շարունակությունը՝ էջ 4-ում/

16.qxd 09/08/2025 13:58 Page 2

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԴԻՊԼՈՄՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ

Օգոստոսի 1-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը մասնակցեց Մարտունու պետական բժշկական քոլեջի 2025 թվականի ուսումնական տարվա շրջանավարտների դիպլոմների շնորհման հանդիսավոր արարողությանը:

Միջոցառմանը մասնակցում էին նաեւ Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը, Մարտունու ԲԿ տնօրեն Անդրանիկ Հարությունյանը, Մարտունու համայնքապետարանի աշխատակիցներ, Մարտունու ԲԿ բուժանձնակազմի անդամներ, շրջանավարտների ծնողներ:

Հանդես գալով բացման խոսքով՝ Մարտունու պետական բժշկական քոլեջի տնօրեն Տարոն Արշակյանը նշեց, որ այս տարի հաստատությունը կյանք է ճանապարհում իր հերթական՝ թվով 84 շրջանավարտներին, ովքեր համալրելու են պետական կամ մասնավոր առողջապահական հաստատությունների բուժքույրերի եւ բուժակների շարքերը կամ ուսումը շարունակելու են բարձրագույն ուսումնական հաստատություններում: Առանձնահատուկ ընթերցվեցին այն շրջանավարտների անունները, ովքեր արդեն մեկնել են զինվորական ծառայության եւ իրենց պարտքն են կատարում հայրենիքի հանդեպ:

Շրջանավարտների դիպլոմները շնորհեցին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը, Մարտունու ԲԿ տնօրեն Անդրանիկ Հարությունյանը, Մարտունու պետական բժշկական քոլեջի տնօրեն Տարոն Արշակյանը, դասախոսներ Վարդան Կարապետյանը եւ Սամվել Սահակյանը:

Ողջույնի եւ շնորհավորանքի խոսքերով հանդես եկան Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը, Մարտունու պետական բժշկական քոլեջի դասախոս Ալբերտ Սիրականյանը:

Միջոցառման ավարտին ներկաներին գեղագիտական հաճույք պատճառեցին Մարտունու պետական բժշկական քոլեջի շնորհալի սաները:

«Գեղամա աշխարհ»

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԴԻՏԱՐԿԵՑ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ

/սկիզբը՝ էջ 1-ում/

Այցի երրորդ կանգառը Երանոսի 3, 7, 8, 9, 11-րդ փողոցներում էր, որտեղ ՀՀ կառավարության կողմից 2024 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում արտաքին լուսավորության ցանց է կառուցվել: Երանոսի արտաքին լուսավորության ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմել է 10 միլիոն 500 հազար դրամ, որի 60 տոկոսը հատկացրել է ՀՀ կառավարությունը, 40 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Լուսավորության ցանցը կառուցվել է 2600 մետր ընդհանուր երկարությամբ, ԼԵԴ համակարգով աշխատող 98 լուսատուների տեղադրմամբ:

2024 թվականի օգոստոսից մեկնարկած շինարարական աշխատանքներն ավարտվել են տարեվերջին, ինչի արդյունքում Երանոս գյուղի վերոնշյալ փողոցներն իրենց պատմության մեջ առաջին անգամ լուսավորվում են գիշերային ժամերին:

Այցի չորրորդ կանգառը «Շողան աղբյուր» կոչվող տարածքի ջրահավաք ավազանի եւ նրանից սնվող ջրատարի հատվածում էր, որտեղ ՀՀ կառավարության կողմից 2024 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրի շրջանակներում կառուցվել է խմելու ջրատարի արտաքին ցանց եւ ջրահավաք 1 ավազան:

Երանոսի խմելու ջրատարի արտաքին ցանցի եւ ջրահավաք ավազանի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 22 միլիոն 407 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Երանոսի «Շողան աղբյուր» տարածքում ջրահավաք ավազանի եւ նրանից սնվող 1900 մետր երկարության ջրատարի կառուցում ու միացում՝ գյուղը սնուցող ներքին ցանցին:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2024 թվականի սեպտեմբերի կեսերից եւ ավարտվել տարեվերջին:

Ծրագրի իրականացման արդյունքում Երանոս գյուղին մատակարարվող խմելու ջրի հզորությունն ավելացել է շուրջ 7 լիտր վայրկյանով: Ծրագրի շահառու են հանդիսանում Երանոս գյուղի բոլոր տնտեսությունները:

Այցի 5-րդ կանգառը Երանոս գյուղի կենտրոնական փողոցում էր, որտեղ ՀՀ կառավարության կողմից 2024 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում Մարտունու տարածքի պատմամշակութային հուշարձանները պատկերող երկու ավտոկանգառ է կառուցվել:

Երանոսի ավտոկանգառների կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 8 միլիոն 320 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2024 թվականի նոյեմբերից եւ ավարտվել 2025 թվականի հուլիսին:

Ծրագրի իրականացման արդյունքում Երանոս գյուղի բոլոր բնակիչներն արդեն օգտվում են ժամանակակից, Մարտունի համայնքի պատմության եւ բնության հուշարձանները պատկերող, ճանաչողական ու զբաստաշրջային նշանակությունը գովազդող ավտոկանգառներից:

Այցի 6-րդ կանգառը Վարդաձորի միջնակարգ դպրոցի շենքի շինհրապարակում էր, որտեղ արդեն սկսվել եւ ընթանում են վերանորոգման աշխատանքները ՀՀ պետբյուջեի միջոցների հաշվին, ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում:

Ծրագրի իրականացման պայմանագրային արժեքը կազմում է 202 միլիոն դրամ:

Ծրագրով նախատեսված է շենքի տանիքի մասնակի նորոգում, բացօթյա մարզահրապարակի, վինիլային հատակի կառուցում, պատերի ներքին ու արտաքին հարդարում, սանհանգույցների, կոյուղու, ջեռուցման համակարգի նորոգում, նոր դռների տեղադրում, այլ կարգի աշխատանքներ:

Շինարարական աշխատանքները նախատեսված է ավարտել առաջիկա չորս ամիսների ընթացքում:

Այցի 7-րդ կանգառը Վարդաձորի նորաստեղծ թաղամասում էր, որտեղ ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում կառուցվել է խմելու ջրատարի ներքին ցանց:

Վարդաձորի խմելու ջրատարի ներքին ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 39 միլիոն 562 հազար 611 դրամ, որի 75 տոկոսը հատկացրել է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է խմելու ջրատարի ներքին ցանցի կառուցում նորաստեղծ թաղամասում եւ հին ջրագծերի փոխարինում պոլիէթիլենային նոր խողովակներով: Կառուցվող ջրատարի ընդհանուր երկարությունը կազմում է 3 կիլոմետր 875 մետր:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2024 թվականի օգոստոսին եւ ավարտվել նույն տարվա դեկտեմբերին:

Ծրագրի իրականացման արդյունքում Վարդաձոր գյուղի 110 տնտեսություն ապահովվել են որակյալ եւ շուրջօրյա ջրամատակարարմամբ:

Այցի 8-րդ կանգառը Վարդաձորի մայր առվի հատվածում էր ու մի շարք թաղամասերում, որտեղ ՀՀ կառավարության կողմից 2024 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում կառուցվել է ոռոգման համակարգ եւ Ձորագյուղ-Վարդաձոր ջրանցք:

Վարդաձորի ոռոգման համակարգի եւ Ձորագյուղ-Վարդաձոր ոռոգման ջրանցքի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 140 միլիոն 295 հազար 862 դրամ, որի 75 տոկոսը հատկացրել է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է ոռոգման համակարգի կառուցում 10, 14, 16, 26, 27, 35, 41 –րդ եւ Ալաշկերտի փողոցներում ու մայր առվի վրա՝ 6010 մետր ընդհանուր երկարությամբ: 1700 մետր երկարությամբ էլ կառուցվել է Ձորագյուղ-Վարդաձոր ոռոգման ջրանցք:

Ոռոգման համակարգի եւ ջրանցքի շինարարական աշխատանքները մեկնարկել են 2024 թվականի սեպտեմբերից եւ 2025 թվականի հուլիսի 24-ի դրությամբ արդեն ավարտվել են:

Ծրագրի շահառու են հանդիսանում Վարդաձոր գյուղի բոլոր տնտեսությունները, որոնց այս տարվանից ոռոգման ջուրը մատակարարվում է ժամանակին եւ անկորուստ:

Այցի 9-րդ կանգառը Վարդաձորի մշակույթի տան բակի շինհրապարակում էր, որտեղ ՀՀ կառավարության կողմից 2024 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ընթանում են բակային տարածքի բարեկարգման աշխատանքները:

Վարդաձորի մշակույթի տան բակի բարեկարգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 37 միլիոն 968 հազար դրամ, որի 65 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 35 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսվում է տարածքի կանաչապատում, եզրաքարերի տեղադրում, ասֆալտապատում 820 քմ տարածքով, սալիկապատում՝ 162 քմ մակերեսով ու հենապատերի կառուցում՝ 108 մետր երկարությամբ, Ալաշկերտի եւ 10-րդ փողոցների հատվածներում, հենապատերի ցանկապատում:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2024 թվականի նոյեմբերին եւ 2025 թվականի հուլիսի 24-ի դրությամբ իրականացվել շուրջ 85 տոկոսով: Շինարարությունը նախատեսված է ավարտել այս տարվա ընթացքում:

Այցի 10-րդ կանգառը Ձորագյուղի խմելու ջրատարի կառուցման շինհրապարակում էր, որտեղ ՀՀ կառավարության կողմից 2024 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ընթանում են շինարարական աշխատանքներ:

Ձորագյուղի խմելու ջրատարի ներքին ցանցի եւ աղբյուրակապերի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 133 միլիոն 734 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է 10 կիլոմետր 315 մետր խմելու ջրատարի ներքին ցանցի եւ 3 աղբյուրակապի կառուցում: Աղբյուրակապերը կառուցվում են «Բոռբոռ» աղբյուրի ակունքներում:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2024 թվականի սեպտեմբերին եւ կավարտվեն 2025 թվականին: Կառուցվում է նաեւ բաշխիչ ցանց՝ 260 տնային միացմամբ:

2025 թվականի հուլիսի 30-ի դրությամբ շինարարական աշխատանքներն իրականացվել են շուրջ 45 տոկոսով:

Ծրագրի իրականացման արդյունքում 260 տնտեսություն Ձորագյուղում կունենան շուրջօրյա ու որակյալ ջրամատակարարում:

Այցի 11-րդ կանգառը Ձորագյուղի ոռոգման ջրատարի կառուցման շինհրապարակում էր, որտեղ ՀՀ կառավարության կողմից 2024 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ընթանում են շինարարական աշխատանքներ:

Ձորագյուղի ոռոգման ջրատարի ներքին ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 104 միլիոն 212 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Ձորագյուղի 8 փողոցում ոռոգման ցանցի կառուցում, որոնցից երկու փողոցում կառուցված ջրատարները միաժամանակ ծառայելու են որպես հեղեղատարներ: Ոռոգման ներքին ցանցը կառուցվում է երկաթե կիսախողովակներով՝ 2090 մետր ընդհանուր երկարությամբ:

Շինարարական աշխատանքները սկսվել են 2024 թվականի հուլիսից եւ 2025 թվականի հուլիսի 23-ի դրությամբ իրականացվել շուրջ 90 տոկոսով:

Ծրագրի իրականացման արդյունքում Ձորագյուղի տնտեսություններին ոռոգման ջուրը կմատակարարվի ժամանակին եւ անկորուստ:

Մարզպետ Կարեն Սարգսյանը շրջեց շինհրապարակներում, զրուցեց շինարարների հետ, նկատված թերությունների շուրջ արեց դիտողություններ եւ առաջարկություններ՝ դրանց շտկման ուղղությամբ տալով համապատասխան հանձնարարականներ:

«Գեղամա աշխարհ»

16.qxd 09/08/2025 13:58 Page 3

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆՆ ԱՅՑԵԼԵՑ ԵՐԱՆՈՍ ԳՅՈՒՂԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎԱԾ ՈՒ ՆՈՐԱԲԱՑ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

Հուլիսի 23-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի հետ այցելեց Երանոս գյուղի հիմնանորոգված ու նորաբաց մանկապարտեզ:

Նրանց ուղեկցում էին Երանոսի վարչական ղեկավար Սաշա Բավեյանը, Գեղարքունիքի մարզպետի եւ Մարտունու համայքնապետարանի աշխատակազմերի քաղաքաշինության ոլորտի պատասխանատուներ:

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Երանոս գյուղի մանկապարտեզը հիմնանորոգվել է ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում, 2019-2024 թվականների ընթացքում:

Երանոսի մանկապարտեզի հիմնանորոգման ծրագրի մեկնարկը տրվել է 2019 թվականից եւ ընթացել մի քանի փուլերով: 2019-2024 թվականների ընթացքում մանկապարտեզի հիմնանորոգման ու կահավորման նպատակով ծախսված ընդհանուր գումարը կազմում է 267,1 միլիոն դրամ:

2024 թվականի հոկտեմբերին, ծրագրի վերջին փուլով իրականացվել են մանկապարտեզի շենքի բակային հատվածի հիմնանորոգման, բարեկարգման եւ խաղարանների տեղադրման աշխատանքներ: Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 78 միլիոն 387 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացրել է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը: Նույն ծրագրի շրջանակներում մանկապարտեզի կարիքների համար ձեռք է բերվել գույք, իսկ 2025 թվականի մայիսից արդի չափորոշիչներին համապատասխանող Երանոսի մանկապարտեզն իր դռներն է բացել 90 սաների առջեւ: Առաջիկայում այստեղ կբացվի եւս մեկ խումբ՝ 30 սանի համար:

Մարզպետը շրջայց կատարեց մանկապարտեզում, զրուցեց աշխատակիցների եւ սաների հետ՝ շնորհավորելով նրանց արդի չափորոշիչներին համապատասխան մանկապարտեզի գործարկման առիթով:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ՝ ԵՐԱՆՈՍԻ ԹԻՎ 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՇԵՆՔԻ ՇԻՆՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Հուլիսի 23-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի հետ մշտադիտարկում անցկացրեց Երանոս գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոցի շենքի շինհրապարակում, որտեղ շինարարական աշխատանքներն ընթանում են 2025 թվականի ապրիլից, «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի» պատվիրատվությամբ:

Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 2 միլիարդ 490 միլիոն 813 հազար դրամ: Նոր դպրոցական շենքը կառուցվում է ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում: Դպրոցական նոր շենքը կառուցվում է հին դպրոցի տեղում: 2025 թվականի հուլիսի 23-ի դրությամբ արդեն ավարտվել են հին շենքի քանդման աշխատանքները եւ ընթանում է նկուղային հարկի կառուցումը:

288 տեղանոց նոր դպրոցը նախագծով լինելու է երկհարկ եւ եռահարկ կառույց, 4 մասնաշենքով, 8900 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով: Երկու մասնաշենքերը լինելու են եռահարկ, 1-ը՝ երկհարկ, իսկ 1 մասնաշենքը լինելու է մարզադահլիճը:

Երանոսի թիվ 2 միջնակարգ դպրոցի դասաժամերը կազմակերպվում են Երանոսի թիվ 1 միջնակարգ դպրոցի շենքում:

Մարզպետ Կարեն Սարգսյանը շրջեց կառույցում, զրուցեց շինարարների հետ, նկատված թերությունների շուրջ արեց դիտողություններ եւ առաջարկություններ՝ դրանց շտկման ուղղությամբ տալով համապատասխան հանձնարարականներ:

ՍԵՎԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՏԱՆԻՔԻՆ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆ Է ՏԵՂԱԴՐՎԵԼ

«Հայաստան» համահայկական հիմնադրամի՝ Ֆրանսիայի, Բրազիլիայի եւ Արգենտինայի տեղական մարմինների ֆինանսավորման շնորհիվ Գեղարքունիքի մարզի Սեւան քաղաքի նորակառույց ու մեկ շաբաթ առաջ շահագործման հանձնված երաժշտական դպրոցի տանիքին տեղադրվել է արեւային ֆոտովոլտային կայան:

Կայանն ունենալու է 20 կիլովատտ ժամ հզորություն, որը, հաստատության էներգետիկ կարիքները հոգալուց բացի, կծեւավորի նաեւ խնայողություններ:

Օրեր առաջ պաշտոնապես բացվեց Սեւանի Վ. Սարգսյանի անվան երաժշտական դպրոցի նոր կառուցված շենքը, որն իր ֆիզիկական հնարավորություններով եւ հարմարավետությամբ, կահավորմամբ,երաժշտական գործիքների հագեցվածությամբ նոր շունչ ու թարմություն է հաղորդելու Սեւանի մշակութային կյանքին՝ սեւանցիների տասնամյակների երազանքը դարձնելով իրականություն: Էներգախնայողությանն ու էներգաարդյունավետությանը միտված այս հիմնարար քայլն ամբողջացնում է արդեն իսկ իրականացված աշխատանքները, որն սպասված էր ու անհրաժեշտ:

Արմինե Ղուկասյան

ՆԱԶԵՆԻ ԼԻՃԸ

Գեղամա լեռնավահանի հարավային թեւում, ծովի մակերեւույթից մոտ 3100 մետր բարձրության վրա, Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղից շուրջ 20 կիլոմետր հեռավորության վրա ծփում է Նազենի անունը կրող լիճը:

Բարձրաբերձ լեռների գոգավորության մեջ սքանչելի պատկեր է սփռում այս լիճը շրջապատով մեկ:

Նրանից երկու տեղով սկիզբ են առնում երկու գետակներ, որոնք ծեւավորում են Գավառագետը վերին հոսանքներում:

Թեեւ հուլիս ամիսը կիսվել է, սակայն Նազենի լիճը շարունակում է սնվել իր շրջակա բարձունքների ձնհալի ջրերից:Ավելին, նրա հատակից բխում ու ցայտում են աղբյուրները: Նազենին զուլալ է ու սառնորակ, արեւի ցոլքերի տակ բազմագույն տեսք առած:

Ափից տաս-քսան մետր հեռավորությամբ արդեն այն խորանում է մի քանի մետրով, իսկ, ըստ կատարված ուսումնասիրությունների, կենտրոնական հատվածներում այն ունի մինչեւ երեսուն մետր խորություն:

Լիճը զբաղեցնում է ավելի քան հինգ հեկտար տարածք:

Այն գտնվում է Սպիտակասար լեռան արեւմտյան կողմում:

Նազենիի հյուսիսային կողմում կան հինգ փոքր լճակներ, որոնք դեռ ցամաքած չէին ամռան կեսին ու իրենց հերթին առանձնակի շուք էին հաղորդում լեռների ու լճի համայնապատկերին:

Եվ այդ զուլալ, սառնորակ ու անապական ջրին հաղորդվելու երջանիկ բախտն ունեցա, մի կարճ ժամանակ լող տալով Նազենիի սրտի ու հոգու դիցական տիրույթներում:

Խոսրով Խլղաթյան

ԱՆԱԿՆԿԱԼ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԼԵՌՆԵՐՈՒՄ, ՃԱՊՈՆԱՑԻ ՏԱԿՈՒՅԱՄԱՅԻ ՀԵՏ

Մայրամուտի ժամին հնասերներ ու արշավորդներ Թաթուլ Տոնոյանի եւ Սեւակ Արեւշատյանի հետ գտնվում էինք հեռավոր լեռների գրկում, Գեղարքունիքի եւ Արարատի մարզերի սահմանաբաժան գոտում, հանքային ջրաղբյուրի կողքին:

Լեռներում երկար թափառելուց հետո ծմերուկով, հաց ու պանրով ու խաշած ձվով մեր քաղցն էինք հագեցնում, վայելում սառնորակ աղբյուրի հրաշալի, թթվահամ ջուրը, երբ քիչ հեռվում նկատեցինք դեպի ջրաղբյուր քայլող միայնակ մարդու:

Նույնիսկ տարակուսեցինք, որ այդ ժամին միայնակ մարդը ոտքով, առանց մեքենայի կարող է հայտնվել այս ամայի, անմարդաբնակ վայրում:

Առավել մեծ եղավ մեր զարմանքը, երբ մեզ դեմդիմաց կանգնեց ճապոնական արտաքինով մի տղամարդ՝ ճամփորդական ուսապարկով:

Նա ժպիտով ողջունեց մեզ ու զրույցի բռնվեց Սեւակ Արեւշատյանի հետ, քանի որ երեքիս մեջ նա էր միայն անգլերեն լեզուն քչե-շատե հասկացող:

Ճապոնացին Սեւակին հասկացրեց, որ իր անունը Տակույա է, ազգանունը՝ Ասսա, ինքն ապրում է Տոկիոյում, իսկ հիմա քայլում է Հայաստանի լեռներով:

Ճապոնացին հավելեց, որ քայլարշավը սկսել է Մեղրիից, Սյունիքի ու Վայոց ձորի լեռներով հասել մինչեւ Գեղամա լեռներ ու լեռնային կածաններով պիտի գնա մինչեւ Սեւանա լիճ:

Տակույան քաղցած էր ու սիրով ընդունեց մեր հյուրասիրությունը: Կարճ զրույցի ընթացքում նա հասկացրեց, որ տպավորված է ոչ միայն Հայաստանի բնությամբ, այլ նաեւ նրա սրտաբաց ու հյուրասեր մարդկանցով, գեղեցիկ լեռներով ու սառնորակ աղբյուրներով:

Ու մթնշաղից քիչ առաջ մենք սրտաբաց հրաժեշտ տվեցինք մեր անակնկալ հյուրին, ով քիչ անց պիտի միայնակ վայելեր Հայաստանի լեռների խորհրդավոր գիշերը եւ լուսաբացին դիմավորեր նույնքան խորհրդավոր, հրավառ արեւածագը:

Մեզ համար էլ հուլիսյան այդ օրը եղավ խորհրդավոր. այդ կուսական լեռների մեջ ինքներորդ դարով թվագրվող մի քանի գեղաքանդակ խաչքարեր տեսանք, քարափի մեջ՝ գայլի ձագ, սառնորակ ու հանքային աղբյուրի կողքին՝ քայլարշավորդ ճապոնացի:

Խոսրով Խլղաթյան

16.qxd 09/08/2025 13:58 Page 4

ԳԵՂԱՄԱ ԼԵՌՆԵՐԻ ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ

/սկիզբը՝ էջ 1-ում/

Իհարկե, մինչ այս մենք ժայռապատկերներ տեսել ենք Սպիտակասարի արեւելյան կողմում, Սեւսար լեռան փեշին, Վարդենիսի լեռներում, ուստի կարող էինք այս ամենը չհամարել նորություն, եթե չլինեին այս ժայռապատկերների բազմաքանակությունն ու բազմազանությունը:

Այո, մեր տեսածը ժայռապակերների մի ամբողջ գրադարան էր կամ մատենադարան, որտեղ գրեթե ամեն մի որձաքար մի բաց գրքի տեսքով փայլատակում էր մեր աչքերի առաջ: Առաջին հայացքից պարզունակ թվացող այդ պատկերները, իրականում, գաղտնագրեր են, պատկերագրեր, պատմություն անցյալ կամ արդեն ապրած կյանքի մասին, տիեզերական առեղծվածների մասին, մարդու հոգեկերտվածքի ու փայլատակող մտքի մասին:

Գեղամա լեռների ժայռապատկերների մասին բավականին հարուստ գրականություն է ստեղծված, առանձին ուսումնասիրողների կողմից տրված են գիտական համոզիչ փաստեր ու բացատրություններ

դրանց ստեղծման նախադրյալների, ժամանակաշրջանների, բովանդակության, պատմահնագիտական ու պատմամշակութային նշանակության մասին:

Առավել ընդգրկուն ուսումնասիրություն է կատարել այս ուղղությամբ Հարություն Մարտիրոսյանը՝ հեղինակելով «Գեղամա լեռների ժայռապատկերները» կոթողային աշխատությունը:

Այդուհանդերձ, անհիշելի ժամանակներից պահպանված ու մեզ հասած այդ ժայռապատկերները, որոնք համարվում են նախնադարյան մարդկանց կողմից արված առաջին քայլերը արվեստի կամ պատկերագրի բնագավառում, շարունակում են մնալ առեղծվածային ու զարմանահրաշ կոթողներ՝ սփռված մեր բարձրադիր ու չքնաղ լեռների լանջերին, մեծ տարածքներ ընդգրկող քարափների տիրույթներում: Ընդ որում, խոսքը չի գնում մի քանի հարյուր ժայռապատկերի մասին: Ինչպես վկայում են գիտական ուսումնասիրությունները, միայն Գեղամա լեռներում հայտնաբերված ժայռապատկերները հասնում են 12 հազարի, որոնք աչքի են ընկնում պատ-



կերների առատությամբ, ժամանակագրական լայն ընդգրկումով, պատմական նշանակությամբ, արվեստի ոճերի բազմազանությամբ:

Գեղամա լեռները հարուստ են ոչ միայն գետերով ու լճակներով, ալպյան փարթամ բուսականությամբ, կենդանական աշխարհով, այլ նաեւ բազալտ քարերով, որոնք էլ նախնադարյան նկարիչների համար դարձել են հարմարավետ այնպիսի կտավներ, որոնք հազարամյակներ շարունակ դիմացել են ամռան տապին ու ձմռան դաժան ցրտերին, հողմերին ու հեղեղներին, բնության մյուս տարերքներին՝ մնալով գրավոր ու խոսուն վկաները մեր ամենահեռավոր նախնիների վարած կյանքի, հավատալիքների, պաշտամունքի, զբաղմունքի, գեղագիտական ճաշակի, կենսասիրության ու շնորհների:

Ժայռապատկերների այժմ հայտնի հիմնական խմբերը տարածվում են Գեղամա լեռնաշղթայի լեռնագագաթների մոտ, 120-130 քառակուսի կիլոմետր ընդհանուր տարածության եւ 2000-3000 մետր բարձրության վրա, բնական գոգավորությունների մեջ, քամուց պաշտպանված ու աղբյուրների մոտ գտնվող հրաբխային քարակարկառներում:

Գեղամա լեռների ժայռապատկերները, որոնք վերաբերում են նեոլիթյան ժամանակաշրջանին, փորագրված են երբեմն հսկայական չափերի հասնող որձաքարե ժայռաբեկորների, մեծ մասամբ մետաղական փայլով մակերեսներին՝ ձեռքի քարե թակիչների եւ կտրիչների օգնությամբ, կետհարվածային եւ գծաէսքիզային եղանակներով: Ժայռապատկերների մեջ աչքի է ընկնում վայրի կենդանիների բազմազանությունը, որտեղ նշմարվում են ինչպես այժմ Հայաստանում գոյություն չունեցող, այնպես էլ մինչ օրս Գեղամա լեռներում ապրող կենդանիների պատկերները: Կենդանիներն ու թռչունները, ինչպես եւ մարդկային ֆիգուրները, երկնային մարմինները, տարատեսակ առարկաներն ու աստվածային կերպարները պատկերված են թե՛ առանձին եւ թե՛ խմբերով:

Ժայռապատկերները գաղափար են տալիս ոչ միայն տեղական համայնքների գոյատեւման ու զարգացման հիմնական նախապայմանների՝ կենդանական աշխարհի հարստության, բազմազանության մասին, այլեւ ժամանակի տնտեսական զբաղմունքների՝ որսորդության, անասունների վայրի տեսակների ընտելացման ու բուծման պայմանների մասին: Ժայռապատկերներում զգալի տեղ են բռնում որսորդական ու անասնապահական ծեսերն ու արարողությունները, որոնցից անբաժան է հայկական հռչակավոր շունը՝ գամփռը:

Գեղամա լեռների պատկերների մեջ աչքի են զարնում վայրի կենդանիների ամենատարբեր տեսակների, նրանց մեծ ու փոքր խմբերի ահռելի քանակն ու բազմազանությունը: Հստակորեն նշմարվում են ինչպես չորրորդական ժամանակներից պահպանված, այժմ Հայաստանում գոյություն չունեցող, այնպես էլ մեր օրերին բնորոշ կենդանիների պատկերներ: Դրանք են՝ զուբրը, վայրի ցուլը, կովկասյան ազնիվ եղջերուն, առյուծը հեպարդը, իշայծամը, կխտարները, ընտելացված ու վայրի ձիերը, աղվեսն ու գայլը, շների շատ տարատեսակներ, վարազը, լուսանը, ընձառյուծը, նապաստակն ու մանր կենդանիների վատ որոշվող մի քանի տեսակները, սողունների զանազան տիպերը, վերջապես՝ բադը, սագը, արագիլը, կարապը, կաքավը: Այս կենդանիներից շատերը այժմ էլ շարունակում են ապրել Գեղամա լեռներում:

Բազմաթիվ ուրիշ ժայռապատկերներում հանդես են գալիս կենդանիների շրջափակման կամ որսորդական այլ գործողությունների կապակցված տեսարաններ՝ կենդանիների բազմաթիվ պատկերներով: Նման կոմպոզիցիաներից մեկը պատկերում է եղջերուների ու այծերի սլացիկ մի խումբ շուրջանակի հետապնդող որսորդների ու դիմացից հարձակվող շների օղակի մեջ: Բոլոր կենդանի արարածներն այստեղ ներկայացված են արտահայտիչ դինամիկայի, բուռն գործողության, բնորոշ շարժումների մեջ:

Հսկա ժայռապատկերներից մեկը իր չորս քառակուսի մետր տարածությամբ լցված է բեզոարյան այծերի 24 ավարտուն եւ մի քանի անավարտ պատկերներով, որոնք ուղղված են ձախից աջ: Դրանց դիմաց կանգնած կապկպված ներին եւ մի ուրիշ այծ կարծես փակում են արածող հոտի ճամփան ու ավարտում կոմպոզիցիան: Հովիվը կանգնած է անասունների ետեւում, գամփռ շան հետ միասին եւ ձեռքերի շարժումներով կարծես հավաքում է հոտը:



Ու այսպես անվերջ կարելի է թվարկել եւ վերծանել այս քարաբեկորների վրա արված պատկերները, որոնցից յուրաքանչյուրը մի առանձին արժեք է, հմայող տիրույթ:

Անառարկելի է, որ այս քանակության ժայռապատկերները չէին կարող կերտվել մեկ, անգամ տասնյակ տարիների մեջ, մեկ կամ մի քանի վարպետների կողմից: Ժայռապատկերային արվեստը հայկական լեռնաշխարհում անցել է հազարամյակների ճանապարհ՝ սերնդեսերունդ փոխանցվելով, կատարելագործվելով ու հարատեւելով եւ ծնունդ տալով գրային համակարգերին: Ու չեն սխալվում նրանք, ովքեր

այս ժայռապատկերների մեջ նկատում են հայկական գրի սաղմերը:

Այս վայրը, հիրավի, ոչ միայն բաց երկնքի տակ փռված անվերջանալի, գաղտնախորհուրդ թանգարան է, այլ նաեւ թաքնված սրբավայր, որտեղ ամփոփված է հայ ժողովրդի հանճարի, կենսասիրության առասպելական պատմությունը, որտեղ հոգով ու սրտով պիտի ուխտի, աղթելու եւ խոնարհվելու գա ամեն մի հայ:

Մեր հոգու պարտքը կատարած ուխտավորների պես էլ Պայտասարի ժայռապատկերային բացօթյա թանգարանից ուղղություն ենք վերցնում դեպի Սպիտակասարի գագաթ:

Խոսրով Խլղաթյան

ԸՆԹԱՆՈՒՄ ԵՆ ՍԵՎԱՆ-ՄԱՐՏՈՒՆԻ- ԳԵՏԱՓ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ 1,5 ԿԻԼՈՄԵՏՐԱՆՈՑ ՀԱՏՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ գյուղի վարչական տարածքում արդեն մեկ ամիս է, ինչ սկսվել եւ ընթանում են Սեւան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ճանապարհի 1,5 կիլոմետրանոց հատվածի կառուցման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, Սեւան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ճանապարհի 1,5 կիլոմետրանոց հատվածի կառուցման ծրագրի նախահաշվային արժեքը կազմում է 492 միլիոն դրամ, պայմանագրային արժեքը՝ 388 միլիոն 800 հազար դրամ:

Ծրագրով նախատեսված է նոր ճանապարհի կառուցում՝ 1,5 կիլոմետր երկարությամբ ու 14 հազար քառակուսի մետր մակերեսով՝ հողային հարթեցման, խճավազային հիմքի, ավազակոպճային շերտի, եռաշերտ ասֆալտբետոնյա ծածկի, ջրահեռացման համակարգի տեղադրման աշխատանքների տեսքով: Շինարարական աշխատանքներն իրականացնում է «ՎՄՎ ՔՈՄՓԼԻ» ՍՊԸ-ն:

2025 թվականի հուլիսի 23-ի դրությամբ արդեն իրականացվել են հողային հարթեցման, ջրահեռացման համար նախատեսված մետաղական խողովակների, ավազակոպճային շերտի եւ խճավազային հիմքի տեղադրման աշխատանքները: Ճանապարհը նախապատրաստվում է եռաշերտ ասֆալտապատման: Զուգահեռ իրականացվում են նաեւ կողային առուների տեղադրման աշխատանքները: Շինաշխատանքները կավարտվեն առաջիկա 1 ամսվա ընթացքում:

-Սեւան-Մարտունի-Գետափ ճանապարհի այս հատվածում նոր ճանապարհի կառուցումը չափազանց անհրաժեշտ ու կարեւոր խնդիր է լուծում, քանի որ արդեն հին ճանապարհահատվածում ձմռան ամսիներին ձյան կուտակումները խանգարում էին ճանապարհատրանսպորտային երթեւեկության նորմալ սպասարկմանը՝ մաքրման աշխատանքների համար ավելորդ ժամանակ, միջոցներ ու ջանքեր խլելով սպասարկողներից: Նոր ճանապարհահատվածի շահագործման դեպքում արդեն այդ խնդիրները հիմնովին կարգավորված կլինեն,- հավաստեցին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմից:

Ծրագիրն ամբողջությամբ իրականացվում է պետբյուջեի միջոցներով:

«Գեղամա աշխարհ»

16.qxd 09/08/2025 13:58 Page 5

ԹԱՔՆՎԱԾ ԽԱՉՔԱՐԵՐԻ ԵՎ ԼՔՎԱԾ ԳՅՈՒՂԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Գեղարքունիքի եւ Արարատի մարզերի սահմանաբաժան գոտում, Մարտունի համայնքի վարչական տարածքում, Գեղամա լեռնավահանի հարավարեւելյան մասում, Մարտունի քաղաքից շուրջ 30 կիլոմետր դեպի հարավ- արեւմուտք գտնվում է մի լքված բնակավայր, որը 1949 թվականից ի վեր ամառային արոտավայր է ծառայում Զոլաքարի ու Լիճքի տնտեսությունների համար:

Իսկ նրա բնակիչները, որոնք այստեղ հաստատվել են Մեծ Եղեռնից հետո, Արեւմտյան Հայաստանի Մշո գավառի Թեղուտ գյուղից, 1918-1919 թվականներին, մոտ երեք տասնամյակ անց ՀԽՍՀ կառավարության որոշմամբ բնակության են տեղափոխվել Արարատյան դաշտավայր:

Այս բնակավայրը, որը կրում է Սառնաղբյուր անունը, այժմ շատ ավելի ավեր, քան թե շեն վիճակում է, քանի որ անասնապահությամբ զբաղվողների թիվը վերջին տասնամյակների ընթացքում կտրուկ կրճատվել է Զոլաքարում ու Լիճքում, իսկ սարվորների լքված տները փլուզված կամ կիսականգուն վիճակում են:

Մեզ դիմավորող Սեւադա Ավետյանը, որ համարվում է Մարտունի համայնքի Զոլաքար գյուղի բնակիչ, ծնվել է հենց Սառնաղբյուրում, հեռավոր 1965 թվականին, Զոլաքար գյուղի սարվոր մարդկանց ընտանիքում ու մինչ օրս, ամառային ու աշնանային ամիսներին անբաժան է իր ծննդավայրից:



Նա գիտի Սառնաղբյուրի ամեն մի անկյունը ու մեզ սիրով առաջնորդում է դեպի հին ջրաղացներ, բուխարիկով ջեռուցվող հին տներ, եկեղեցու ու մատուռի ավերակների մեջ պատսպարված խաչքարեր:

Դրանցից առաջինը գտնվում է Սառնաղբյուրի հարավարեւմտյան կողմում, մատուռի ավերակի մեջ: Այն իր պատրաստման ոճով իններորդ դարի կոթող է, գեղաքանդակ, խաղողի ողկույզներով ու այլ զարդամոտիվներով:

Երկրորդ գեղաքանդակ խաչքարը, դարձյալ իններորդ դարում պատրաստված, գտնվում է Սառնաղբյուրից մի քանի կիլոմետր արեւմուտք, «Քյավառի յայլա» կոչվող վայրում, 9-10-րդ դարերում թվագրվող եկեղեցու ավերակների մեջ:

Այս խաչքարը եւս ուրույն կերտվածք ունի, գրավիչ զարդանախշեր:

Ներքեւի մասից թեեւ այն կոտրված է, սակայն հարավային պատին հենված վիճակում կազմում է մեկ ամբողջություն:

Եկեղեցու ավերակներից մի քանի մետր այն կողմ կա բրոնզեդարյան դամբարան, սակայն բացված ու թալանված վիճակում:

Երրորդ խաչքարը Սեւադան մեզ ցույց տվեց Սառնաղբյուրի արեւելյան թեւում՝ կիսավեր անասնագոմի արեւմտյան պատին հենած: Այն թեեւ չափսերով փոքր է, սակայն երեւելի է իր տեսքով, պատրաստման շատ վաղ թվականով:

Սառնաղբյուրի արեւելյան թեւում, ուղիղ ճանապարհաեզրին, տարածվում է 20-րդ դարի 1920-1948 թվականների գերեզմանոցը, ուր ամփոփված են Մեծ Եղեռնից մազապուրծ ու այս հողի վրա նոր հայրենիք գտած մշեցի հայ ընտանիքների անդամների աճյունները: Բոլոր շիրմաքարերը կրում են մահացածների անուն-ազգանունները, ծննդյան ու մահվան ստույգ թվականները, խաչի քանդակներ:

Նրանցից եւ ոչ մեկի հարազատները հիմա չեն բնակվում այստեղ, այս շիրիմներին մոտիկ, սակայն, ինչպես վկայում է Սեւադան, այստեղ ամփոփված հանգուցյալների հարազատներից ոմանք հաճախակի այցելում են իրենց ծնողների կամ պապերի ու տատերի շիրիմներին, գյուղից առնում իրենց պապերի կարոտը:

Սեւադան վկայում է, որ Սառնաղբյուրը ժամանակին եղել է այս տարածքի ամենաշեն, ամենահարուստ գյուղերից մեկը, որի տնտեսություններն ունեցել են մեծ քանակության անասուններ, մշակվող մեծ հողատարածքներ ու գյուղմթերքների բավականաչափ առատություն:

-Ծնողներս ասում էին, որ հենց այս գյուղում են սովի տարիներին մի բուռ գարին փոխանակել մի բուռ ոսկու հետ: Բացի այդ, այս գյուղի տարածքում ժամանակին նաեւ քրդեր են բնակվել, որոնք տարբեր առիթներով հաճախակի բախումներ են հրահրել հայ բնակչության հետ: Այս գյուղը դպրոց է ունեցել, ակումբ-գրադարանի շենք, որոնցից միայն ավերակներն են հիմա մնացել: Անգամ պահպանված մի քանի հղկված քարերից կարելի է եզրակացնել, որ այդ շենքերը գեղեցիկ, ճարտարապետական տեսք ունեին: Ես այդ շենքերը հիշում եմ կանգուն վիճակում,-պատմում է Սեւադան:

Այսքանով էլ կարելի է եզրակացնել, որ այս բնակավայրը գործել է անհիշելի ժամանակներից, ուր մարդիկ կարողացել են թողնել պատմամշակութային որոշակի ժառանգություն ու հայկականության անջնջելի հետքեր:

Մի այլ տխուր վիճակագրություն է բերում Սեւադան Սառնաղբյուրի անցած ու ներկա օրերի համեմատության մասին, որը հնչում է ավելի ցավագին, ավելի մտահոգիչ:

-Խորհրդային Միության փլուզումից առաջ Զոլաքարից Սառնաղբյուրում ամառային արոտավայր եկող ընտանիքները, սովխոզի անասնագլխաքանակի հետ միասին, պահում էին մինչեւ 1200 խոշոր, 1000-ից ավել մանր եղջերավոր անասուններ: Լիճքի տնտեսությունների թվերին թեպետ չեմ տիրապետում, սակայն նրանք էլ հազարին հասնող կամ ավել անասնագլխաքանակ էին բերում այստեղ: Մինչդեռ հիմա խոշորի թիվը հազիվ անցնում է 40-ը, իսկ մանրի գլխաքանակն իսպառ բացակայում է, ընդամենը մի քանի տնտեսություն է ամռանը գալիս Սառնաղբյուր, անասնակերի բերքահավաքի ծավալներն անասելի կրճատված են, արոտավայրերն ու խոտհարքերն օգտագործվում են ոչ լիարժեք,-ամփոփում է Սեւադան:

Քայլում ենք Սառնաղբյուրի նեղլիկ, ոլոր-մոլոր փողոցներով, որտեղ մի ժամանակ եռացել է կյանքը, սակայն այժմ դրանք պատված են կանաչ կամ կիսաչոր մոլախոտերով, փշերով ու խռիվներով: Կիսաքանդ վիճակում կամ դեռ կանգուն, սակայն դռներին կողպեքներ կրող տները մեզ վրա թողնում են հերթական ճնշող տպավորությունը:

Սառնաղբյուրի հարավային եզրին, ջրաղացների մոտ, ժայռի կրծքից բխող աղբյուրի կողքին Զոլաքար գյուղի բնակիչ, այս պահին ՌԴ Նիժնի Նովգորոդում ապրող Արայիկ Ռազմիկի Գրիգորյանը ժամանակակից տուն է կառուցել արեւային ֆոտովոլտային կայանով: Բնության այս սքանչելի անկյունում վեր բարձրացած այս տունը կարող է դառնալ շուրջտարյա գործող հյուրատուն՝ ընդունելով հայ ու արտասահմանցի բազմաթիվ զբոսաշրջիկների, ովքեր այս տարածքում անգնահատելի, անկրկնելի պատմամշակութային ու բնական հրաշալի հուշարձաններ կարող են տեսնել ու միաժամանակ օգտվել բնության ողջ շռայլություններից:

Բավական է ասել, որ Սառնաղբյուրի շրջակայքում է գտնվում Թմբուկայր կամ Նաղարախան ամրոցը՝ հիմնված Քրիստոսից առաջ առաջին հազարամյակում, Սուրբ Վարդան եկեղեցին, հսկայական չափերի բազալտակուռ աղավնու քանդակը, հնագույն բնակատեղիներ, ժայռաքանդակներ: Բազմաթիվ են սառնորակ աղբյուրները, ժայռախմբերը, սարավանդներն ու լեռնագագաթները, ձորերը, բլուրները:

Այս հատվածներից են գոյանում Արգիճի գետի ոլորանները, որոնք հսկայական սարահարթի վրա նմանվում են գալարվող, առաջ սլացող, ամեհի ու ահռելի չափերի վիշապօձի:

Գուցե թե Արայիկ Գրիգորյանի քայլը օրինակ ծառայի մյուսներին՝ Սառնաղբյուրին նոր կյանք ու շունչ տալու համար, գուցե թե մի գեղեցիկ օր մեր երկիրն ընթանա մեր լքված բնակավայրերը վերաբնակեցնելու ճանապարհով:

Հեռավոր դարերից մեզ հասած, հազար ու մի արհավիրքից փրկված ու մեր հոգեբուխ աղոթքներն ընդունող այս խաչքարերը մեզնից այդ են պահանջում՝ շենացնել ու մարդաշատությամբ լցնել Հայոց աշխարհը, այլ ոչ թե քայլել ավերակների տխուր, հոգեցունց պատկերների ու դաժան իրականության միջով, ամայության անվերջանալի արահետներով:

Խոսրով Խլղաթյան

ԳԵՂԱՄԱՍԱՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՆՈՐ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ ԵՆ ՇՈՒՐՋ 50 ՏՈԿՈՍՈՎ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Գեղամասար գյուղի մանկապարտեզի նոր շենքի կառուցման աշխատանքներն իրականացվել են շուրջ 50 տոկոսով:

Ինչպես տեղեկացրեց շինարարական աշխատանքներն իրականացնող «Ալմաք» ՍՊԸ հիմնադիր տնօրեն Գեւորգ Փինաչյանը, Գեղամասար գյուղի մանկապարտեզի նոր շենքի կառուցման եւ հին շենքի վերակառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 150 միլիոն դրամ, որն ամբողջությամբ հատկացվում է պետբյուջեի միջոցներից:

Ծրագրով նախատեսված է մանկապարտեզի հին շենքի ամրացում ու վերակառուցում ու նոր լրացուցիչ մասնաշենքի կառուցում՝ նկուղային հարկով:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2024 թվականի հուլիսից, որոնց ավարտը նախատեսված է 2026 թվականի հուլիսին:

-Այսօրվա դրությամբ փաստացի իրականացվել են շուրջ 75 միլիոն դրամի շինմոնտաժային ու այլ կարգի աշխատանքներ: Մասնավորապես, ավարտվել են հին շենքի ամրացման ու վերակառուցման, նոր շենքի կառուցման, ջեռուցման համակարգի, սանհանգույցների կառուցման, էլեկտրաֆիկացման, դռների եւ լուսամուտների տեղադրման աշխատանքները: Մնում է իրականացնել նոր մասնաշենքի տանիքի կառուցման, արտաքին երեսպատման, ներքին հարդարման ու այլ կարգի որոշ աշխատանքներ: Փորձում ենք արագացնել աշխատանքի տեմպերը, այն հաշվով, որ հասցնենք նույնիսկ այս տարեվերջին, սահմանված ժամկետից ավելի վաղ, ավարտել շինարարությունը,-ներկայացրեց Գեւորգ Փինաչյանը:

Գեղամասարի մանկապարտեզը կառուցվում ու վերակառուցվում է ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում, ինչի արդյունքում Գեղամասարում եկող տարի կշահագործվի արդի չափորոշիչներին համապատասխան 50 տեղանոց մանկապարտեզ:

«Գեղամա աշխարհ»ս

16.qxd 09/08/2025 13:58 Page 6

ՆՈՐԱՏՈՒՍԻ ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ Է ՀԱՆՁՆՎԵԼ ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԿԱՅԱՆ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Նորատուս գյուղի թիվ 2 մանկապարտեզի տարածքում, «Սեւանա լճի շրջակա միջավայրի պահպանություն» ծրագրի շրջանակներում, բացվել է կենսաբանական մաքրման ապակենտրոնացված կայան, որն ապահովում է մանկապարտեզի կեղտաջրերի անվտանգ մաքրումը եւ մաքրված ջուրը ոռոգման նպատակով օգտագործումը:

Ինչպես տեղեկացրեց «Սեւանա լճի շրջակա միջավայրի պահպանություն» ծրագրի Գեղարքունիքի մարզի ծրագրերի համակարգող Վարազդատ Սարգսյանը, նոր կայանը ոչ միայն էկոլոգիական, այլեւ կրթական դեր է ստանձնում: Նրա տեղակայումը հենց մանկապարտեզում խորհրդանշում է մաքուր միջավայրի կարեւորությունը երեխաների ապագայի համար:

Միջոցառման ընթացքում ներկայացվել են նաեւ փոքրիկների կողմից պատրաստված նկարները՝ Սեւանա լճի թեմայով:

Կեղտաջրերի կենսաբանական մաքրման կայանի բացմանը ներկա են եղել Հայաստանում ԵՄ դեսպան Վասիլիս Մարագոսը, ՀՀ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Արա Մկրտչյանը, Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպան Կլաուդիա Բուշը, ՀՀ Ջրային կոմիտեի նախագահ Կարեն Սեդրակյանը, Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Վահան Զարոյանը, Գավառի համայնքի ղեկավարի տեղակալ Գրիգոր Դաշտոյանը, պաշտոնական այլ անձինք:

Բացի կայանի կառուցումից, ծրագրի շրջանակում մանկապարտեզների ուսուցիչները ստացել են հատուկ կրթական նյութեր՝ երեխաներին ջրի խնայողության, Սեւանի պահպանության եւ բնապահպանական գիտակցության վերաբերյալ ուսուցանելու համար:

«Սեւանա լճի շրջակա միջավայրի պահպանություն» ծրագիրը նպատակ ունի՝ բարելավել Սեւանա լճի էկոհամակարգի պաշտպանությունն ու խթանել ջրի որակի բարձրացումը: Ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական Միության եւ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության կողմից եւ իրականացվում է GIZ-ի եւ ՄԱԶԾ-ի միջոցով՝ սերտ համագործակցելով ՀՀ պետական եւ համայնքային մարմինների հետ:

ՍԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՈՐԾԱՐԿՎԵԼ Է ԿՈՇՏ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Գեղարքունիքի մարզի Սեւան քաղաքում 2025 թվականի հուլիսի 26-ից մեկնարկել է կոշտ կենցաղային թափոնների տեսակավորման համակարգը:

Կենցաղային կոշտ թափոնների տեսակավորման նպատակով Սեւան համայնքը ստացել է 1680 եվրոպական արտադրության թափոնաման եւ 1 թափոնատար մեքենա՝ շուրջ 300000 եվրոյի համարժեք աջակցությամբ: Նոր ծառայությունն արդեն հասանելի է քաղաքի ողջ տարածքում: Այս համակարգի ներդրումը հնարավոր է դարձել Շվեդիայի կողմից ֆինանսավորվող «Հայաստանում թափոնների կառավարման քաղաքականություն» ծրագրի շրջանակում, որն իրականացվում է «Acopian Center for the Environment»-ի կողմից՝ Սեւանի քաղաքապետարանի, ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների եւ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունների հետ համագործակցությամբ:

Այժմ սեւանցիները կարող են տեսակավորել վերամշակվող թափոնները՝ կապույտ թափոնամանում լցնելով պլաստիկ, մետաղ, թուղթ, կանաչ թափոնամանում՝ ապակի: Իսկ սեւ թափոնամաններն էլ, որոնք տեղադրվել են «Կոտայքի եւ Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊԸ-ի կողմից, նախատեսված են խառը, չտեսավորվող թափոնների համար:

Վերամշակելի թափոնների հավաքումն ու տեղափոխումը կիրականացնի Կոտայքի եւ Գեղարքունիքի ԿԿԹԿ-ն:

Նոր համակարգը կնպաստի բարեկարգ եւ առողջ միջավայրի ձեւավորմանը: Բայց ամեն ինչ կախված է համայնքի բնակիչների գիտակցված մասնակցությունից: Վստահ ենք՝ Սեւանը օրինակ կլինի այլ համայնքների համար:

-Սեւանում ներդրվել է նորարարական համակցված մոդել՝ ըստ եվրոպական փորձի: Մեր հաջորդ քայլը կենսաբանական թափոնների տեսակավորումն է: Թափոնները պարզապես աղբ չեն՝ դրանք ռեսուրս են,-նշել է Սեւանի կոշտ կենցաղային թափոնների ծրագրի ղեկավար Հարություն Ալպետյանը:

Միջոցառման ընթացքում Սեւան համայնքի բնակիչները ծանոթացել են կոշտ կենցաղային թափոնների տեսակավորման նոր համակարգին, մասնակցել թեմատիկ խաղերի եւ ստացել անհրաժեշտ տեղեկատվական նյութեր:

Արմինե Ղուկասյան

ՁՈՐԱԳՅՈՒՂՈՒՄ ԽՄԵԼՈՒ ՋՐԱՏԱՐԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑ Է ԿԱՌՈՒՑՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ձորագյուղ գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում արդեն մեկնարկել և ընթանում են խմելու ջրատարի ներքին ցանցի կառուցման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրեց Ձորագյուղի վարչական ղեկավար Արարատ Սաֆարյանը, Ձորագյուղի խմելու ջրատարի ներքին ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 280 միլիոն դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է խմելու ջրատարի ներքին ցանցի կառուցում Ձորագյուղի 8 փողոցներում, 12 կիլոմետր 200 մետր երկարությամբ, պոլիէթիլենային խողովակներով:

Շինարարության մեկնարկը տրվել է 2025 թվականի հուլիսից: Ծրագիրը նախատեսվում է ավարտի հասցնել այս տարվա ընթացքում:

Ծրագրի իրականացման արդյունքում խմելու մշտական ու որակյալ ջրամատակարմամբ կապահովվեն Ձորագյուղի 280 տնտեսություն:

ՎԱՆԵՎԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ԳԱՐԱՇԻ ՓՈՂՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վանեւան գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում մեկնարկել եւ ընթանում են Գարագաշի փողոցի հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, Վանեւանի Գարագաշի փողոցի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 108 միլիոն դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Վարդենիսի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է ճանապարհի երթեւեկելի մասի հիմնանորոգում՝ 1037 գծամետր երկարությամբ եւ 4300 էառակուսի մետր մակերեսով, ջրահեռացման համակարգի կառուցում, կահավորում եւ գծանշում:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի հուլիսի 14-ից եւ կավարտվեն նույն տարվա հոկտեմբերին:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ն:

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔՈՒՄ 3 ՓՈՂՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԳՏՆՎՈՒՄ ԵՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքում ՀՀ կառավարության կողմից 2024 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ավարտական փուլում են գտնվում Արցախի, Պարույր Սեւակ եւ Թումանյան փողոցների հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, հիմանորոգումն ընդգրկում է վերոնշյալ փողոցների մայթերի սալիկապատման, ճանապարհների երթեւեկելի մասերի ասֆալտապատման ու ջրահեռացման համակարգերի կառուցման աշխատանքները:

Մարտունու Արցախի, Պարույր Սեւակ եւ Թումանյան փողոցների երթեւեկելի մասերի ասֆալտապատման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 79 միլիոն 963 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը: Ծրագրով նախատեսված է 3 փողոցների ճանապարհների երթեւեկելի մասերի ասֆալտապատում՝ 1311 գծամետր ընդհանուր երկարությամբ եւ 9177 քառակուսի մետր մակերեսով:

Շինարարական աշխատանքները սկսվել են 2024 թվականի հոկտեմբերից եւ 2025 թվականի հուլիսի վերջերի դրությամբ արդեն գտնվում են ավարտակա փուլում:

Շինարարական աշխատանքներն իրականացրել է «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ն:

2024 թվականի սուբվենիցոն մեկ այլ ծրագրով սալիկապտվել են Արցախի, Պարույր Սեւակ եւ Թումանյան փողոցների մայթերը՝ 1380 գծամետր ընդհանուր երկարությամբ եւ 2651 քառակուսի մետր մակերսով: Ծրագրի շրջանակներում կառուցվել է նաեւ ջրահեռացման համակարգ:

Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 115 միլիոն 645 հազար դրամ, որի 70 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 30 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2024 թվականի սեպտեմբերից եւ 2025 թվականի հուլիսի վերջի դրությամբ մոտենում են ավարտին:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «ՎՄՎ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ-ն:

16.qxd 09/08/2025 13:58 Page 7

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԴԵՍՊԱՆ ՕԼԻՎԻԵ ԴՐԿՈՏԻՆՅԻՆ ԱՅՑԵԼԵԼ Է ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿՈՒՆՔ ԳՅՈՒՂ

Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի դեսպան Օլիվիե Դրկոտինյին, «Սեւան ստարտափ սամիթ 2025»-ին ներկա գտնվելուց հետո այցելել է նաեւ Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Ծաղկունք գյուղի բուժկետ:

Ծաղկունքի բուժկետը վերջերս է վերանորոգվել Ֆրանսայի Հանրապետության Իզերի եւ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզերի, ինչպես նաեւ Գրենոբլ եւ Սեւան քաղաքների միջեւ կնքված ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում, ֆրանսիական «Բժշկական օգնություն եւ զարգացում» կազմակերպության կողմից:

Ծրագիրն ընթացել է երկու փուլով, ինչի արդյունքում այստեղ իրականացվել են վերանորոգման, ներքին հարդարման, ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ: Բուժկետը համալրվել է առաջին օգնության համար անհրաժեշտ սարքավորումներով, տեխնիկական միջոցներով, իսկ Սեւանի բժշկական կենտրոնի կողմից տրամադրվել է անհրաժեշտ գույք:

Այս ծրագրի իրականացման արդյունքում բնակիչների համար առաջնային բուժօգնությունը դարձել է առավել հասանելի, միջավայրը՝ հարմարավետ:

Դեսպան Օլիվիե Դրկոտինյին «X»-ի իր միկրոբլոգում գրել է. «Այց Գեղարքունիքի մարզի Ծաղկունք գյուղի դիսպանսեր, որը վերանորոգվել է «Բժշկական օգնություն եւ զարգացում» ֆրանսիական ՀԿ-ի կողմից Գրենոբլ քաղաքի եւ Գեղարքունիքի մարզպետարանի աջակցությամբ: Ֆրանսիայի եւ Հայաստանի միջեւ ապակենտրոնացված համագործակցությունը տարածվում է ողջ երկրով մեկ»:

Արմինե Ղուկասյան

ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՓՈԽՀԱՏՈՒՅՈՒՄ Է ՏՐԱՄԱԴՐԵԼ ՆՈՐԱՏՈՒՍ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի նախաձեռնությամբ Նորատուսի բնակիչ Աշոտ Հայրապետյանին վնասի փոխհատուցում է տրամադրվում՝ թվով 20 ոչխարների տեսքով:

2025 թվականի մայիսի 29-ի գիշերը գայլերի ոհմակը հարձակվել էր Աշոտ Հայրապետյանի փարախում գիշերող ոչխարների հոտի վրա եւ հոշոտել 70 գլուխ ոչխար:

Աշոտ Հայրապետյանի ընտանիքն իր ապրուսը վաստակում է ոչխարապահությամբ: Բացի իր սեփականից, հոտում եղել են նաեւ ուրիշների ոչխարներ: Շուրջ 160 գլուխ ոչխարների գրեթե կեսին գայլերը հոշոտել են: Գայլերի հարձակումից անմիջապես հետո Գավառի համայնքապետարանի կողմից կազմված հանձնաժողովը տեղում ուսումնասիրել է իրավիճակը եւ հարցը ներկայացրել համայնքի ավագանու քննարկմանը, որի արդյունքում էլ որոշվել է՝ տուժած ընտանիքին մասնակի փոխհատուցում տրամադրել՝ 20 ոչխարի տեսքով: 20 գլուխ մայր ոչխարներն արդեն Գավառի համայնքապետարանի կողմից հանձնվել են տուժած տնտեսությանը:

-Թեեւ վնասն ամբողջությամբ չի փոխհատուցվել, սակայն տրվածը մեղմել է մեր տնտեսության կրած վնասները ու արդեն հնարավորություն տալիս՝ մեր հոտի գլխաքանակն աստիճանաբար ավելացնելու համար, ինչի համար էլ մեր շնորհակալություն ենք հայտնում Գավառ համայնքի ղեկավարին, ավագանու անդամներին ու աշխատակիցներին,-ասել է Աշոտ Հայրապետյանը:

Ալվարդ Մանուկյան

ՍԵՎԱՆԱ ԼՃՈՒՄ ՏՐՎԵԼ Է ԱՌԱԳԱՍՏԱՆԱՎԱՅԻՆ ՍՊՈՐՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՎԱԹԻ ՄՐՑԱՇԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԸ

2025 թվականի հուլիսի 25-27-ին «ԴԻ ԷԼ ԷՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն եւ «Winds of Armenia» առագաստանավային ակումբը Սեւանա լճում կազմակերպել են առագաստանավային սպորտի Հայաստանի Գավաթի մրցաշարի առաջին փուլը:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմից, մրցաշարի առաջին փուլի արդյունքներով հաղթող են ճանաչվել «Skolkovo Sailing Team 3», «Marlin», «Black Swan» թիմերը:

Մրցաշարի երկրորդ փուլը կկայանա այս տարվա օգոստոսի 15-17-ին, կրկին Սեւանա լճի ափին՝ «Նոյ Լենդ Ռեզորթ»-ի տարածքում:

Մրցանակային ֆոնդը կազմում է 7 միլիոն դրամ:

Առագաստանավային սպորտի Հայաստանի գավաթի հաղթողը ձեռք կբերի իրավունք՝ մասնակցելու սեպտեմբերին կայանալիք բաց առաջնությանը՝ առանց մեկնարկային վճարի:

Իսկ սեպտեմբերի 11-14-ը կայանալու է Հայաստանի բաց առաջնությունը J/70 դասում, որտեղ մասնակցելու են մինչեւ 20 պատվիրակություն՝ տարբեր երկրներից:

Մրցանակային ֆոնդը կազմելու է 10 միլիոն դրամ:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ԲԱՅՔԵՐԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ 6-ՐԴ ՓԱՌԱՏՈՆԸ

Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Դրախտիկ գյուղի տարածքում տեղի է ունեցել բայքերական միջազգային 6-րդ փառատոնը, որին մասնակցել են այս ենթամշակույթի ներկայացուցիչներ ոչ միայն Հայաստանից, այլեւ արտասահմանից՝ Գերմանիայից, Ավստրիայից, Իրանից եւ Ռուսաստանից:

Ինչպես տեղեկացրեց «Բայքեր զոն. Հայաստան» ՀԿ նախագահ Արտակ Ռշտունին, իրենց կազմակերպության նպատակն է զարգացնել բայքերական տուրիզմը Հայաստանում՝ հիմնական ուղղություններ ընտրելով հայկական պատմամշակութային հուշարձաններն ու բնության տեսարժան վայրերը: Սա Հայաստանը ճանաչելի դարձնելու եւ ենթամշակույթը որոշակիորեն զարգացնելու միջոց է:

Փառատոնը Գեղարքունիքի մարզում հյուրընկալվել է երեք օրով: Տեղացի եւ հյուր բայքերները սկզբնակետից 130 կմ տարածություն են անցել՝ հասնելով մինչեւ Գոշավանք, դադարներ ունենալով Ճամբարակ եւ Դիլիջան քաղաքներում:

-Այսօրինակ միջոցառումները հնարավորություն են տալիս՝ Հայաստանում բազմազան դարձնել ամառային առօրյան: Փառատոնի կազմակերպման ուղղությամբ մեզ բավարար աջակցություն է ցուցաբերել Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը,- ներկայացրեց Արտակ Ռշտունին:

Անահիտ Կարեյան

ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ 3 ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում մեկնարկել եւ ընթանում են Ազգալդյան, Երիտասարդության եւ Անդրեասյան փողոցների հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, Վարդենիսի Ազգալդյան, Երիտասարդության եւ Անդրեասյան փողոցների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 137 միլիոն դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Վարդենիսի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է վերոնշյալ երեք փողոցների երթեւեկելի մասերի գոյություն ունեցող պատվածքի քանդում, ավազակոպճային հիմքի եւ ասֆալտբետոնյա ծածկի տեղադրում, ջրահեռացման համակարգի կառուցում, կահավորում եւ գծանշում: Հիմնանորոգվող ճանապարհի ընդհանուր երկարությունը կազմում է 978 մետր, մակերեսը՝ 10 հազար 269 քառակուսի մետր:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «ՎՄՎ ՔԱՄՓԻ» ՍՊԸ-ն:

Շինարարական աշխատանքները նախատեսված է ավարտել 2025 թվականի հոկտեմբերին:

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՄԱՐԶԱԴԱՀԼԻՃԸ

Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում ՀՀ կառավարության կողմից տրամադրված միջոցներով 2025 թվականի մայիսից սկսվել եւ ընթանում են Ճամբարակի թիվ 2 հիմնական դպրոցի մարզադահլիճի հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրեց Ճամբարակի թիվ 2 հիմնական դպրոցի տնօրեն Կարինե Գրիգորյանը, ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 19 միլիոն 948 հազար դրամ: Ծրագրով նախատեսված է մարզադահլիճի հատակի, պատերի, առաստաղի, հանդերձարանների, ֆիզղեկի սենյակի, լոգարանների, միջանցքի, սանհանգույցների կապիտալ նորոգում, օդափոխության համակարգի, նոր լուսամուտների տեղադրում ու ցանցապատում, այլ կարգի աշխատանքներ:

2025 թվականի հուլիսի 30-ի դրությամբ շինարարական աշխատանքներն իրականացված են շուրջ 80 տոկոսով:

Ծրագրի իրականացման արդյունքում այս ուսումնական տարվա սկզբից Ճամբարակի թիվ 2 հիմնական դպրոցի աշակերտները ֆիզկուլտուրայի դասերը կանցկացնեն արդի չափորոշիչներին համապատասխան մարզադահլիճում:

16.qxd 09/08/2025 13:58 Page 8

ԻՆՉՊԵՍ ՔՈԼՈՉԻ ԲԵԳՈՆ ԳՆԱՑ ԷՐՉՐՈՒՄ

Պատմում են, որ մարտունեցի Քոլոզի Բեգոն եղել է շատ շիտակ եւ ուղղամիտ մարդ: Նրա հետ կապված են մի շարք զրույցներ՝ կապված աշխատանքային գործունեության, հնձելու, կալսելու հետ: Հայաստանի քաղաքներից շատ է սիրել էրզրումը եւ երազել է մի անգամ գոնե լինել այդ քաղաքում: Պատմում են նաեւ, որ Բեգոն մեկ-մեկ էլ հիվանդանում էր, բայց չէր թողնում հեքիմ կամ բժիշկ կանչել, այլ որ տղաներից սառույց էր ուզում: Մի քանի կտոր սառույց ուտելուց հետո թեթեւանում էր եւ հաջորդ օրը ոտքի ելնում: Մի անգամ էլ հիվանդանում է տիֆով եւ սկսում զառանցել: Սառույց է ուզում, պահանջում է, որ իր մեծ որդի Արզումանը ձեռքը բռնի, խոսում է կնոջ ու մյուս տղաների հետ եւ հանկարծ պահանջում է, որ իրեն տեղափոխեն էրզրում: Տանեցիների բացատրությունը չի լսում ու անընդհատ պահանջում է.

-Էրզրու՛մ, էրզրու՛մ...

Արզումանը կարգադրում է՝ հագցնել Բեգոյի տրեխները, գլխին շոր կապել եւ տաք շալ գցել ուսերին: Երբ այդ բոլորը կատարում են, տնեցիները, Բեգոյի ձեռքերից բռնած, ասում են.

-Ափո, քայլիր, որ գնանք էրզրում:

Բեգոյին քայլելով տանում, մտցնում են իրենց գոմը, որտեղ փնչացնում էր միակ չալ գոմեշը:

-Ափո՛, հասանք էրզրում, դե կարոտդ հան,- ասում են ու քթի տակ ծիծաղում:

Խելքը թռցրած ծերունին հափշտակությամբ շոշափում է գոմի խոռոչավոր պատերը, ջրի գուռը, վերջապես գոմեշի մարմինը: Երբ ծերունու ձեռքերը հասնում են գոմեշի մարմնին, կատակասեր Կոլյան ավելացնում է.

-Ափո, դա էլ էրզրումի հացի փուռն է:

«Էրզրումից» ետ են բերում տուն, եւ Բեգոն իրեն լավ է զգում: Մի քանի օր հետո նա լրիվ ապաքինված էր:

Արտաշ Ստեփանյան

ՃՈՒԿ ԽԱՂԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ճուկ խաղը Մարտունու օդաներում տարածված ամենամասսայական խաղն է եղել: Այդ խաղը խաղացել են թե՛ մեծերը, թե՛ փոքրերը: Ճուկ խաղի համար վերցնում են 40-50 սմ երկարությամբ եւ մոտ 15 սմ լայնությամբ մի տախտակ, որի հաստությունը չի անցնում երկու սանտիմետրը: Տախտակի ծայրերը կլորացնում են եւ ցայտուն գծերով բաժանում 15 հավասար մասերի: Այնուհետեւ ուռենու շիվերից կտրում են մատիտի հաստությամբ եւ 1.5-2 սմ երկարությամբ 30 փայտիկներ, որոնցից 15-ը ներկում են մի գույնի, մյուս 15-ը՝ ուրիշ գույնի: Խաղը կատարում են երկու հոգով, որոնք նստում են դեմ դիմաց եւ տախտակը տեղավորում իրենց արանքում: Նրա վրա ամեն մեկը տախտակի իր կողմի եզրին գծված վանդակների մեջ շարում է իր ընտրած գույնի փայտիկները՝ յուրաքանչյուրը մի վանդակում: Այնուհետեւ խաղն սկսում են երկու ճաներով /վեգերով/: Խաղացողներից մեկը վերցնում է երկու ճան եւ գցում տախտակի մոտ, մի հարթ տեղ եւ նայում ճաներին՝ որոշելու, թե ինչ դիրքով են ընկել գետնին: Նկատի ունենալով, որ ճաների տարբեր դիրքը պահանջում է համապատասխան խաղ՝ դրանով էլ խաղացողները կողմնորոշվում են ու իրենց փայտիկները տախտակի վրա եղած վանդակներում դասավորում ըստ ճանի ցույց տված ցուցանիշների:

Ընդ որում, ճանի փոս ընկած մասը կոչվում է «պռոշ» եւ հավասար է երկու միավորի, նրա հակառակ կողմը կոչվում է «սալ» եւ հավասար է երեք միավորի, համեմատաբար հարթ մասը կոչվում է «քիս» եւ հավասար է տասը միավորի, իսկ նրա հակառակ կողմը կոչվում է «աղա» եւ հավասար է 14 միավորի:

Խաղացողներից ամեն մեկը ձգտում էր վանդակները գրավել զույգ փայտիկով, քանի որ զույգ փայտիկը համարվում է փական եւ փակում է մի խաղացողի կողմից գրված վանդակը՝ թույլ չտալով, որ հակառակորդը այդտեղով անցնի: «Պռոշն» ու «սալը» զույգ լինելու դեպքում միավոր չի ավելանում, «քիսը» զույգ լինելու դեպքում դառնում է քսան միավոր, իսկ «աղան» զույգ լինելու դեպքում՝ քսանութ միավոր: Հաղթող է համարվում նա, ով առաջինը իր բոլոր փայտիկները տախտակի վրայի վանդակներով անցկացնում ու դուրս է հանում:

Ճուկը խաղացել են հիմնականում զբաղվելու համար: Խաղացել են նաեւ պայմանով, որ տարվողը գառ մորթի, աքլոր մորթի, օղի դնի եւ այլն: Խաղացել են նաեւ այնպիսի պայմանով, որ տարվողը պառկի փորի վրա, իսկ հաղթողը ճուկի տախտակով նախապես որոշված թվով հարվածներ հասցնի նրա հետույքին: Վերջին պայմանը շատ է ուրախացրել օդայում հավաքված մարդկանց եւ կենսագործվել է հանդիսատեսի ակտիվության պայմաններում:

Արտաշ Ստեփանյան

ԸՆԹԱՆՈՒՄ ԵՆ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՏՔԻ ՎՆԱՍՎԱԾ ՀԵՆԱՊԱՏԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Ճամբարակ քաղաքում ՀՀ կառավարության կողմից իրականացվող հրատապ ծրագրերի շրջանակներում այս տարվա հուլիսի կեսերից սկսվել եւ ընթանում են 2024 թվականի հունիսյան հորդառատ տեղումների հետեւանքով վնասված մուտքի հարակից հենապատի վերականգնման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 97 միլիոն 281 հազար դրամ, որն ամբողջությամբ հատկացվում է պետբյուջեի միջոցներից:

Ծրագրով նախատեսված է քանդման աշխատանքների իրականացում, 267 մետր երկարության հենապատի վերականգնում միաձույլ բետոնով եւ երեսպատում բազալտե քրքատաշ սալիկներով: Վերականգնվող հենապատի ողջ երկայնքով տեղադրվելու է նաեւ ութ սանտիմետր հաստության սրբատաշ բազալտե քիվ:

2025 թվականի հուլիսի 30-ի դրությամբ իրականացվում են հողային եւ հենապատի հիմքերի բետոնացման աշխատանքներ: Շինարարական աշխատանքները նախատեսված է ավարտել 2025 թվականի ընթացքում:

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ՃԱՄԲԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԸ

Գեղարքունիքի մարզի Ճամբարակ քաղաքում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում այս տարվա մարտ ամսից սկսվել եւ ընթանում են Ճամբարակի համայնքապետարանի վարչական շենքի հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Ճամբարակի համայնքապետարանի աշխատակազմից, Ճամբարակի համայնքապետարանի վարչական շենքի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 73 միլիոն դրամ, որի 60 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 40 տոկոսը՝ Ճամբարակի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է շենքի առաջին եւ երկրորդ հարկերի ներքին հարդարում, նոր դռների եւ լուսամուտների տեղադրում, սանհանգույցների, աստիճանավանդակների նորոգում, հատակի եւ նիստերի դահլիճի հիմնանորոգում, այլ աշխատանքներ:

2025 թվականի հուլիսի 30-ի դրությամբ շինարարական աշխատանքներն իրականացված են շուրջ 80 տոկոսով:

Ճամբարակի համայնքապտարանի վարչական շենքի երրորդ հարկը հիմնանորոգվել է 2022 թվականին, ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

Ծրագրի պայմանագրային արժեքը կազմել է 15 միլիոն 600 հազար դրամ:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՈՒԺՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍ ԱՄՍԻՆ ԾՆՎԵԼ Է 115 ԵՐԵԽԱ

Գեղարքունիքի մարզի բուժհիմնարկներում 2025 թվականի հուլիս ամսին ծնվել է 115 երեխա՝ 68 տղա, 47 աղջիկ:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական ապահովության վարչությունից, 43 երեխա ծնվել է Մարտունու ծննդատանը, 26 երեխա՝ Սեւանի, 24 երեխա՝ Գավառի, 18 երեխա՝ Վարդենիսի բժշկական կենտրոններում, 4 երեխա՝ Ճամբարակի առողջության կենտրոնում:

2024 թվականի հուլիսին Գեղարքունիքի մարզի ծննդօգնություն իրականացնող բուժհիմնարկներում ծնվել է 111 երեխա:

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՆՎԱԶԵԼ Է 4 ՍԱՆՏԻՄԵՏՐՈՎ

2025 թվականի օգոստոսի 6-ի դրությամբ Սեւանա լիճը ծովի մակերեւույթից գտնվել է 1900 մետր 60 սանտիմետր բարձրության վրա, ինչը 6 սանտիմետրով նվազել է նախորդ տարվա նույն օրը գրանցված նիշից:

Ինչպես տեղեկացրին ՀՀ ՇՄՆ «Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ տեղեկագրից, այս տարվա հունիս հուլիս ամիսների ընթացքում ոռոգման նպատակներով Հրազդանի հունով արդեն բաց է թողնվել 111 միլիոն 904 հազար խորանարդ մետր ջուր, իսկ հունվար-հուլիս ամիսների ընթացքում Արփա-Սեւան թունելային ջրատարով Սեւանա լիճ է տեղափոխվել 98 միլիոն 847 հազար խորանարդ մետր ջուր:

Սեւանա լիճ թափվող գետերը գտնվում են ամառային սակավաջուր փուլում:

ՀՈՎՀԱՆՆԵՍԱՊԱՏՈՒՄ

Հովհաննեսը ծմռան մի օր մրսել, հիվանդացել էր, բարձր ջերմությամբ պառկած էր: Բժիշկ են կանչում: Անդրանիկ Գինոյանը բժշկական պարագաներով գալիս է, զննում, դեղատոմսեր գրում, որից գլխավորը CH2OH-ն էր՝ սպիրտ, եթե չկա՝ օղի:

Հովհաննեսը, լսելով օղու անունը, պառկած տեղից վեր է կենում, թեթեւակի հարվածում Մարգարիտի ուսին, ասելով.

- Բա, որ ես ասում էի՝ ինձ օղի տվեք, ինչու՞ չէիք տալիս:

Տղաները շտապում են խանութ, օղի բերում, բժշկի եւ իրենց հոր հետ խմում, առողջությունմաղթում նրան: Այդ պահից լավանում է եւ շարունակում բարեկամություն անել «Գարեհատիկ Ձոնի» հետ:

***

Աշխատանքի ընթացքում Հովհաննեսի տղա Դարվինը մրսում, հիվանդանում է, բարձր ջերմությամբ պառկում անկողին: Բժիշկ են հրավիրում: Քիչ անց 1-03-ով գալիս է շրջանային հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքի վարիչ Երջանիկ Այվազյանը: Տեսնելով Հովհաննեսին՝ հարցնում է, թե տղան ինչպե՞ս է, ջերմությունը չի՞ իջել: Վերջինս, չկորցնելով հումորի զգացումը, ասում է.

- Դոկտոր ջան, ընդհակառակը, բարձրացել է, հասել է 80-ի:

-Ոնց թե,- զարմացած տագնապում է Այվազյանը,- չհասկացա:

-Մոտ 40 ինքն ուներ, մի 100 գրամ էլ կոնյակ եմ տվել /իրականու�մ ինքն էր խմել/, չեղա՞վ 80: Բժիշկը զննում է հիվանդին, բուժում նշանակում, իսկ հայրիկին ցանկանում հաճախակի պահպանել 76 աստիճանը /36+40/:

***

Հովհաննեսն իր տղա Վազգենի նորակառույց տան բացման կապակցությամբ յուրահատուկ նվեր էր բերել՝ հատուկ պատվիրված բարձորակ պոլի փայտ՝ խոզանակով: Պոչի վրա իր գեղեցիկ ձեռագրով գրել էր. «Նվիրում եմ իմ հարս Գայանեին՝ տան բացման կապակցությամբ», ստորագրել՝ նշելով անուն, ազգանունը եւ ամսաթիվը: Այն մինչեւ այժմ պահպանվում է:

***

Տարիներ առաջ համագյուղացի Տոլկո Իսոյանը մահացել էր: Հովհաննեսը գնում է նրանց տուն՝ հարազատներին մխիթարելու: Նայում է երիտասարդ տարիքում մահացածին, հարցնում մահվան պատճառը, որն ըստ խոսակցությունների, խմածությունն էր եղել եւ ասում.

-Տոլկո ջան, ափսոսում եմ քեզ, միաժամանակ երանի տալիս, եթե կուշտ խմած ես եղել:

Հավաքեց՝ Դարվին Հովհաննիսյանը

ԳԵՂԱՄԱ աշխարհ

Լրատվական գործունեություն իրականացնող «Գեղարքունիք» թերթի խմբագրություն» ՓԲԸ: Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
էլ.հասցե՝ khosrov1@yandex. ru
Գլխավոր խմբագիր՝ Խոսրով Խլղաթյան
հեռ. բջջ. 094022692

Վկայական՝ 02 Ա 050560: Գրանցման համարը՝ 25.120.00834:
Տրված 07.05.2001թ.: Տպաքանակը՝ 1000: Ծավալը՝ 2 մամուլ:
Թողարկման օրը՝ 11. 08. 2025 թ.:
Տպագրվում է «Սամարկ» ՍՊԸ տպարանում:
«Գեղամա աշխարհ» թերթի բոլոր համարներին կարող եք ծանոթանալ https://tert.nla.am կայքում: